

**“ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ” ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱՄԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**“Հաստատում եմ”**

**Բուհի ռեկտոր,**

**Խաչատրյան Գ.Կ.**

**“ 05 ” 05 2014թ.**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱՄԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ**

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 3

“ 30 ” 04 2014թ.

## I. **Ընդհանուր դրույթներ**

1. “Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ” պետական ոչ առևտրային կազմակերպությունում /այսուհետ Բուհ/ գիտական ժողովածուների հրատարակման կանոնակարգով /այսուհետ Կանոնակարգ/ սահմանվում է գիտական աշխատանքներ ներկայացնելու, գիտական աշխատանքները ժողովածուներում գետեղելու և դրանք հրատարակելու կարգը:

2. Սույն Կանոնակարգի իրավական հիմքն է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 20.01.2014թ. թիվ 33Ա/Ք հրամանը:

## II **Կազմակերպման գործընթացը**

3. Բուհի գիտական աշխատանքների ժողովածուն հրատարակվում են տարին մեկ անգամ:

4. Մինչև հունվարի 15-ը Բուհի ռեկտորի հրամանով ձևավորվում է ժողովածուի խմբագրական խորհուրդ, որի կազմում ընդգրկվում են համապատասխան ոլորտի գիտության դոկտորներ: Խորհրդի անդամներից մեկը առաջադրվում է որպես պատասխանատու խմբագիր:

5. Պատասխանատու խմբագիրը հավաքում է ժողովածուի նյութերը, ստուգում է դրանց համապատասխանությունը առաջադրված տեխնիկական չափանիշներին /հավելված 2/, ներկայացնում է գրախոսման /անհրաժեշտության դեպքում արտաքին գրախոսման/: Մերժված աշխատանքները վերադարձվում են հեղինակին համապատասխան գրավոր հիմնավորումներով:

6. Խմբագրական խորհուրդը որոշում է իր նիստերի պարբերականությունը: Նիստը նախագահում է պատասխանատու խմբագիրը: Խորհրդի նիստերին անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել հոդվածների հեղինակները:

7. Խորհրդի նիստում որոշումները ընդունվում են նիստին մասնակցողների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

8. Խմբագրական խորհուրդը կազմակերպում է նյութերի հավաքման աշխատանքները, որոշումներ է կայացնում ներկայացված նյութերի հրատարակման կամ հրատարակումը մերժելու վերաբերյալ:

Խմբագրական խորհուրդը վերահսկում է որոշումների կատարման ընթացքը, լսում է խմբագրական խորհրդի անդամների և պատասխանատու խմբագրի հաշվետվությունները:

9. Խմբագրական խորհուրդը պատասխանատվություն է կրում ներկայացված նյութերի գրախոսման, ակադեմիական ազնվության սկզբունքների պահպանման և հրատարակման համար:

10. Առանց սկզբնաղբյուրը նշելու այլ հեղինակներից դրույթներ և նյութեր օգտագործելը հայտնաբերելու դեպքում խմբագրական խորհուրդը մերժում է հոդվածի հրատարակումը:

11. Ժողովածուում զետեղելու համար նյութերը հավաքվում են տարվա ընթացքում՝ մինչև հոկտեմբերի 20-ը:

12. Խմբագրական խորհուրդը մինչև նոյեմբերի 20-ը որոշում է կայացնում հրատարակման համար նյութերը ժողովածուում զետեղելու մասին և դրանք տրամադրում է խմբագրությանը: Խմբագրությանն են տրամադրվում և այնտեղ պահվում հոդվածների բնօրինակները, գրախոսականները, նիստերի արձանագրությունները: